

ԳԱԳԻԿ ԲԵԳԼԱՐԻ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Ծնվել է 1964 թվականի հունվարի 1-ին
Երևանում:

1971-78 թվականներին սովորել է Մ. Նալ-
բանդյանի անվան թիվ 33 միջնակարգ դպրոցում:

1978-81 թվականներին սովորել և ավարտել է
Երևանի պետական համալսարանին կից ֆիզիկա-
մաթեմատիկական դպրոցը:

1981-85 թվականներին սովորել և ավարտել է
Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ տնտեսագետի որակավորմամբ:

1985-86 թվականներին ծառայել է խորհրդային բանակում:

1993 թվականին ընտրվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն
խորհրդի առաջին գումարման պատգամավոր:

2002-ին ընտրվել է Կենտրոն համայնքի թաղապետ: Վերընտրվել է 2005-ին և
2008-ի սեպտեմբերի 28-ին:

ՀՀ նախագահի 04.03. 2009թ. թիվ ՆՀ-58-Ա հրամանագրով նշանակվել է Երևանի
քաղաքապետ:

2009թ. մայիսի 31-ին տեղի ունեցած Երևանի ավագանու ընտրությունների
արդյունքում դարձել է Երևանի առաջին ընտրված քաղաքապետը: Պաշտոնավարել է
մինչև 2010թ. դեկտեմբերի 8-ը:

2007թ. նոյեմբերի 10-ին (ՀՀԿ 11-րդ համագումար) ընտրվել է Հայաստանի
հանրապետական կուսակցության խորհրդի անդամ:

2009թ. նոյեմբերի 28-ին ընտրվել է ՀՀԿ գործադիր մարմնի անդամ:

2004 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն
«Թաղապետարանական կառավարման սոցիալական հիմնախնդիրները» թեմայով՝
ստանալով սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Կենտրոն համայնքի մտավորականների «Նարեկ» ակումբի պատվավոր
նախագահն է:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

